



«ԱՐՑԱԽ ՉԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 10

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ


«Արցախ ՉԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների խորհրդի կողմից
ընդունված որոշում

«Արցախ ՉԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի 2010 թ. օգոստոսի 20-ին կայացած նիստը որոշել է լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափը ավելացնել՝ թողարկելով 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմսեր, իսկ 2010 թ. դեկտեմբերի 27-ին կայացած տնօրենների խորհրդի նիստի կողմից որոշվեց ընկերության կանոնադրության մեջ կատարել փոփոխություն: Համաձայն տեղաբաշխման արդյունքների՝ տեղաբաշխվել է թողարկված 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմսերից 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) հատը:

Ստորև ներկայացնում ենք «Արցախ ՉԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի 2010 թ. դեկտեմբերի 27-ին կայացած նիստի ընդունած որոշումը:

Ս. Թևոյան

Տնօրենների խորհրդի նախագահ


(ստորագրություն)

30.12.2010թ.

«Արցախ ՉԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումը

1. «Արցախ ՉԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին:

«1. Ընկերության կանոնադրության 6.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 7.362.074.000 (Յոթ միլիարդ երեք հարյուր վաթսուներկու միլիոն յոթանասունչորս հազար) դրամ, որը բաժանված է 7 362 074 հատ հասարակ (սովորական) անվանական ոչ փաստաթղթային բաժնետոմսի, յուրաքանչյուրը 1.000 դրամ անվանական արժեքով:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 7 362 074 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են բաժնետերերին և լրիվ վճարված են նրանց կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են:

Ընկերության հայտարարված բաժնետոմսերի թիվը կազմում է 9.137.926 (ինը միլիոն մեկ հարյուր երեսունյոթ հազար ինը հարյուր քսանվեց) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ անվանական արժեքով:

Հայտարարված սովորական բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ տնօրենների խորհրդի՝ դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված կարգով և ժամկետում:»:

2. Ընկերության գլխավոր տնօրենին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ռեզիստրի Ստեփանակերտի տարածքային բաժին ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը՝ նշված փոփոխությունը օրենքով սահմանված կարգով գրանցելու համար:»